ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլի 23 - 26-ը
Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանունը՝

- Գագիկ Մկրտչյան,
- Արմեն Եգանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի խորհրդական,
- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ,

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի ապրիլի 23-26-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

«Եվրասիական տնտեսական միության տարածքում թանկարժեք քարերի և թանկարժեք մետաղների նկատմամբ գործողություններ իրականացնելու առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի շրջանառվող նախագծի քննարկում, մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում արտադրված ոսկերչական իրերի հարգադրոշումը մյուս անդամ երկրների տարածքում ճանաչելու և իրացման դեպքում կրկնակի հարգադրոշմի պահանջի բացառում:

6. Քննարկված թեմաները

Նախագիծը լրամշակելու ուղղությամբ հայկական կողմի առաջարկների ներկայացում, հիմնավորում և անդամ պետությունների փորձագետների հետ համաձայնեցում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայկական կողմից ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ ուղղված ԵԱՏՄ տարածքում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի արտադրության տեղաշարժի դյուրինացմանը (մասնավորապես՝ ոսկերչական իրերի հարգադրոշման փոխճանաչելիության անհրաժեշտություն և դրոշմապիտակավորման հետ կապված հարցեր): Միևնույն ժամանակ 2018 թվականի հունվարի 1-ից ոսկերչական իրերի հետագծելիությունը թափանցիկ դարձնելու նպատակով ՌԴ տարածքում պարտադիր է դառնում մակնշման

պահանջը, ուստի անհրաժեշտություն է առաջացել նաև քննարկել ՌԴ ներմուծվող ոսկերչական արտադրանքի մակնշման հետ կապված խնդիրները:

Հանդիպման շրջանակներում առանձին քննարկումներ են իրականացվել ԵՏՀ նախարար Կարինե Մինասյանի, ԵՏՀ ներքին շուկայի գործունեության դեպարտամենտի տնօրեն Յու. Չյորնիի, Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի գլխ.վարչության պետ Ի.Ստեպանենկոյի և այլ պաշտոնատար անձանց հետ:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Արդյունքում համաձայնագրի նախագիծը լրամշակվել է համաձայն ներկայացված առաջարկությունների, սակայն որոշ չհամաձայնեցված կետերի շուրջ աշխատանքային կարգով կիրականացվեն քննարկումներ՝ այն համաձայնեցման և նախագծի վերջնական տարբերակը բարձր մակարդակով (ԵԱՏՄ անդամ երկրների հարցի վերաբերյալ պատասխանատու պետական մարմինների ղեկավարների տեղակալների) քննարկման ներկայացնելու համար:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները և ակնկալվող արդյունքները

Արդյունքում առաջարկվել է չհամաձայնեցված հարցերը ֆիկսել արձանագրության մեջ և նշված հարցերը քննարկել բարձր մակարդակով (նախարարի տեղակալների)համաձայն նախկինում ձեռք բերված պայմանավորվածության՝ Երևանում անցկացվելիք քննարկումն իրականացնել ս.թ. մայիսի 11-ին և համաձայնեցնել նախագիծն ամբողջությամբ:

10. Գործուղվողը, ստորագրություն, ամսաթիվ

Գագիկ Մկրտչյան

07.05.2018թ.